ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	
Աշխատատեղի անվանումը	Ռիսկերի կառավարման և վերլուծությունների բաժնի մասնագետ
Ստորաբաժանումը	Ռիսկերի կառավարման և վերլուծությունների բաժին

Պարտականությունները

1. Վարկերի վերաբերյալ տվյալների համապարփակ վերլուծություն՝ առաջադեմ վիճակագրական մեթոդների կիրառմաբ՝ միտումների հայտնաբերման, ռիսկի գործոնների գնահատման և ռազմավարական պլանավորման ապահովման նպատակով:
2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի ավտոմատացում՝ **SQL** օգտագործմամբ:
3. **Microsoft Power BI**-ով ինտերակտիվ վիզուալիզացիաների և վահանակների ստեղծում՝ ընդլայնված վերլուծությունների և որոշումների կայացման համար:
4. Մասնակցություն տվյալների որոնման (data mining) նախագծերում՝ ապահովելու տվյալների շտեմարանի ճշգրտությունն ու վստահելիությունը, ինչպես նաև համակարգի ամբողջականությունը:
5. **Մեքենայական ուսուցման մոդելների** մշակում և ներդրում՝ վարկային ռիսկերի կանխատեսման և հաճախորդի վարքի վերլուծության համար:
6. Վարկային պորտֆելի արդյունավետության գնահատում, վարկային և ֆինանսական ռիսկերի վերլուծություն և քանակական հետազոտությունների կատարում՝ ռազմավարական որոշումների կայացմանն համար:
7. Ռիսկերի /վարկային, գործառնական, ֆինանսկան և այլ/ կառավարման քաղաքականության, սկզբունքների, գործիքների, համակարգերի մշակման և ներդրման աշխատանքների իրականացում:
8. Ընկերության ներքին իրավական ակտերից բխող այլ պարտականությունների կատարում:

Կրթությունը	Բարձրագույն (ցանկալի է մաթեմատիկական, ֆինանսական, տնտեսագիտական)
Մասնագիտական փորձը	Ցանկալի է ունենալ աշխատանքային փորձ համապատասխան ոլորտում՝ տվյալագիտություն, ռիսկերի կառավարում, ֆինանսական վերլուծություն, աուդիտ
Համակարգչային գիտելիքները	MS Office ծրագրային փաթեթ Microsoft Power BI (or Tableau) SQL Management Studio Առավելություն կհամարվի հետևյալ համակարգերին ծանոթ լինելը. AI platforms «ՀԾ-Բանկ» համակարգ
Լեզուների իմացությունը	Հայերեն (գերազանց), անգլերեն (լավ)
Գործարար որակները	• Վերլուծելու ունակություն • Արդյունքին և նպատակին ուղղվածություն • Վճռականություն • Արդյունքին և նպատակին ուղղվածություն • Ճկունություն

Արտոնությունների և փոխհատուցումների փաթեթ	• առողջության ապահովագրություն • վճարվող ազատ օրեր (6 օր) • արտոնյալ պայմաններով հիփոթեքային և սպառողական վարկեր • եռամսյակային պարգևավճարներ • երկարամյա աշխատանքի խրախուսման համակարգ • նվերներ որոշ տոնական օրերի կապակցությամբ • պարգևատրումներ ամուսնության և երեխա ունենալու կապակցությամբ • հետբուհական կրթության ֆինանսավորում
Դիմելու կարգ	Աշխատանքի համար դիմել ցանկացող և համապատասխան որակավորում ունեցող թեկնածուներին խնդրում ենք հայերեն լեզվով լրացնել կայքում ներկայացված դիմումի ձևը՝ https://www.globalcredit.am/about-us/career.html
Ընտրության կարգը	Հարցազրույցի կհրավիրվեն միայն նախնական փաստաթղթային ընտրությունն անցած թեկնածուները: